ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№_____ «_____» _____ 2022 թ.

«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/166» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, հիմք ընդունելով Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի կողմից ներկայացված անկողնային սպիտակեղենի գնման հայտը.

1. Ձևավորել «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/166» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողով և հաստատել դրա ստորև ներկայացվող անհատական կազմը.

Մ. Հովհաննիսյան	Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժնի պետ /հանձնաժողովի նախագահ/
Է. Բայրամյան	Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի ֆինանսական բաժնի առաջին կարգի մասնագետ
Լ. Շահվերդյան	Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժի գլխավոր մասնագետ

2. Էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության ապրանքների գնումների բաժնի գլխավոր մասնագետ Վ. Մեժունցին:

3. Սահմանել, որ էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առաջին նիստը հրավիրել սույն կարգադրությունը ուժի մեջ մտնելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում (ք. Երևան, Արգիշտիի փողոց հ.1, հ.321 սենյակ):

4. Էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ հանձնաժողովի գործունեությունը կազմակերպել գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

5. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատարի վրա:

6. Կարգադրության կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լ. Հովհաննիսյանը:

5/6/2022

X

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN HRACHYA 2302850092

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ